

«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցման ժամանակակից մեթոդները և ՏՀՏ-ները որպես աշխարհագրության դասավանդման կարևորագույն գործիքներ:

ԱՌԱՐԿԱ՝ Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Չոհրակ Յովհաննիսյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.Քարամյան

Սևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Արդյունավետ հնարների կիրառումը աշխարհագրության դասաժամերին
3. Աշխարհագրական թելադրություն:
4. Զվեստը՝ որպես դասավանդման մեթոդ
5. Ուսուցման ժամանակակից մեթոդները և ՏՀՏ-ները որպես աշխարհագրության դասավանդման կարևորագույն գործիքներ:
6. Եզրակացություն
7. Օգտագործված գրականություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Կրթության ժամանակակից համակարգը դասավանդողից և կրթություն իրականացնող մյուս օղակներից պահանջում է ծրագրերի անընդհատ նորացում, թարմացում, կատարելագործում, քանի որ ժամանակի հետ փոխվում են հասարակությունը, կրթության նպատակաուղղվածությունը, տեղի է ունենում տեխնիկական միջոցների նորացում:

Ուսուցման հիմնախնդիրները միշտ էլ առաջնային և կարևոր են եղել հասարակության համար, ուստի զգալի պահանջներ են ներկայացվում նրանց, ովքեր դրանք պետք է լուծեն գործիմացորեն և վարպետությամբ:

Նորօրյա մանկավարժությունը պետք է կարողանա ճիշտ համադրել մեթոդներն ու հնարները:

Աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է վերլուծել աշխարհագրության դասաժամերին արդյունավետ հնարների կիրառման առանձնահատկությունները: Ուսուցման արդյունավետ հնարները նպաստում են ժամանակի տնտեսմանը, դասավանդողի և սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտմանը, տեսակետը արտահայտելու և հիմնավորելու հնարավորությանը:

Աշխարհագրության դասաժամերին արդյունավետ հնարների կիրառումը ենթադրում կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություններ, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտիվ մոդելի տարրեր՝ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դարձնել դասը անսովոր և ավելի հագեցած, հետաքրքիր:

Կրթության համաշխարհային փորձը և մեր կողմից կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ ՏՀՏ-ի ներդրումն իր հերթին կբերի կրթության ավանդական մեթոդների, հնարների ու տեխնոլոգիաների էական փոփոխության: Կբարձրանա ուսուցիչների անձնական պատասխանատվությանը՝ ի նպաստ սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացմանը, քանի որ ՏՀՏ-ները լուրջ ներուժ են պարունակում այս գործընթացի արմատավորման համար:

ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՀՆԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Ակնհայտ է, որ դասավանդման հնարների և մեթոդների ընտրությունը աշխարհագրության դասաժամերին պայմանավորված է շարադրված կամ առաջադրված կյանքի բովանդակությամբ, ծավալով, մատչելիության ու գիտականության աստիճանով, ինչպես նաև մի շարք այլ գործոններով: Այդ իսկ պատճառով ուսուցիչներին առաջարկում են այնպիսի մեթոդներ կամ հնարներ, որոնք կարող են կիրառվել աշխարհագրության դասերին՝ դրանք դարձնելով առավել ոյուրըմբռնելի և արդյունավետ: Միաժամանակ կարևոր է նշել նաև այն, որ տարբեր դասեր կարող են անցկացվել դպրոցի համակարգչային դասասենյակում՝ գեոինֆորմացիոն ուսումնական համակարգերի կիրառմամբ:

Ներկայումս օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում դասավանդման ավանդական մեթոդների ու եղանակների հետ համատեղ աշխարհագրության դասավանդման մեջ ներդնել ուսուցման ժամանակակից ինտերակտիվ մեթոդներ և եղանակներ, հնարներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու ուսուցանվող կյանքի յուրացման արդյունավետությունը և հնարավորություն են ընձեռում ուսուցիչներին ուսուցման կազմակերպման ընթացքում կիրառելու զանազան հնարքներ՝ դասավանդման գործընթացն առավել հետաքրքիր դարձնելու նպատակով:

Իսկ ի՞նչ է ակտիվ ուսուցումը: Ակտիվ ուսուցումն իր մեջ ներառում է այնպիսի մեթոդների կամ հնարների կիրառում, որոնք ոչ թե նախատեսում են ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրում, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և գործնական գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար հաճախ կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարքներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով գործնական վարժություններ և խնդիրներ:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունն ու ճանաչողական ակտիվությունը: Կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմագործառույթ դեր ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ՝ կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ երեք նպատակ.

ա) համախմբել դասի ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,

բ) կատարելագործել արդեն ունեցած գիտելիքները,

գ) ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակրգ, որոնց ընթացքում ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողների կողմից գիտելիքների ինքնուրույն ձեռքբերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Ներկայացվող հնարներն ու մոտեցումներն ուղղված չեն կոնկրետ դպրոցական որևէ առարկայի ուսուցման արդյունավետության բարձրացմանը , ինչն էլ հնարավորություն է ընձեռում դրանք, համադրելով մի շարք այլ մեթոդների հետ, կիրառել նաև աշխարհագրության դասավանդման գործընթացում:

Այժմ ներկայացնենք աշխարհագրության դասը անցկացնելու մի քանի արդյունավետ հնարներ.

Խորհրդատվություն

Երեխաները սիրում են գաղտնիքներ, քանի որ դրանց առկայությունը մոտիվացնում է նրանց: Նրանք ցանկանում են թույլ առաջ բացահայտել գաղտնիքը: Հետևաբար՝ երբեմն կարելի է աշխարհագրության դասը սկսել հետևյալ կերպ. «Ես մտքիս մեջ բան եմ պահել, որը մեր ուսումնասիրած թեմաներից մեկին է վերաբերում: Դուք պետք է ինձ հարցեր տաք, իսկ ես հարցերին կարող եմ տալ միայն «այո» կամ «ոչ» պատասխանները, որոնց միջոցով էլ կարող եք կռահել թեմայի անունը»:

7-րդ դասարանի աշխարհագրության դասին դա կարող է լինել հետևյալ կերպ.


ա) դա բնակչությանն է վերաբերում (այո) բ) բնակչության կազմի հետ որևէ կապ ունի՞ (այո)

գ) բնակչության սեռը կամ տարիքը կապ ունե՞ն (ոչ) դ) մարդիկ առանձնանում են ըստ որոշակի հատկանիշների (այո) ե) դա մարդկանց հավատքի հետ առնչվու՞մ է (ոչ) Այս հարցադրումներից հետո պարզ կլինի սովորողների համար, որ խոսքը ռասաների մասին է:

«Խաթարված հերթականություն»

Այս վարժությունը կնպաստի գիտելիքների ու կարողությունների զարգացմանը. ուսուցիչը պետք է նախօրոք պատրաստի թղթեր, վրան գրի տեքստից ընտրված կարևոր անուններն ու տերմինները, փաստերը և իրադարձությունները: այնուհետև

դրանք խառը հերթականությամբ փակցնի գրատախտակին, հետո հանձնարարի, որ աշակերտները դասվորեն հերթականությամբ: Այս մեթոդի կիրառումը կարելի է ներկայացնել 9-րդ դասարանի «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի Հայկական լեռնաշխարհի թեմայի ուսումնասիրման օրինակով: Կարելի է թեմային առնչվող հասկացությունները գրել փոքր կաշուն թղթերի վրա, այնուհետև հանձնարարել դրանք դասավորել հերթականությամբ և դրանց միջոցով ներկայացնել ամբողջ դասի գաղափարը:



Ֆրայերի մոդելը

Աֆրիկա մայրցամաքի ուսումնասիրման ընթացքում կարելի է Ֆրայերի մոդելը ներկայացնել հետևյալ կերպ.

Մեծությամբ երկրորդ
մայրցամաքը երկրգնդի
վրա

Այստեղ պետք է լինի
Աֆրիկայի քարտեզը

Աֆրիկա

Աֆրիկական պլատֆորմ,
Սահարա
անապատ, ամենատաք
մայրցամաք

Ցածր ջերմաստիճան, առատ
տեղումներ, շատ մասնատված
ափագիծ

Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժնի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ճախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում՝ այդ հասկացության պատկերային արտահայտությունը, որը կարող է տվյալ դեպքում լինել Աֆրիկա մայրցամաքի քարտեզը: Ներքևի ճախ անկյունում գրում ենք օրինակներ, որոնք վերաբերում են այդ հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

Այս մեթոդի առավելություններից է նաև այն , որ ողջ դասարանն է մասնակից դառնում դասապրոցեսին՝ միաժամանակ կատարելով միևնույն աշխատանքը, լսելով միմյանց, ինչպես նաև կարծիքներ փոխանակելով:

Ներկայացնենք «Ձևագնդի» մեթոդի կիրառման օրինակ

«Սավանաների գոնայի բնութագիրը» ուսումնասիրման ժամանակ:

Ինչպես գիտենք այս մեթոդի նպատակը մասնակիցների կարծիքների փոխանակումը, ընտրությունը, հավաքումը և խմբի գաղափարների կամ կարծիքների կազմումն է:

Աշխատանքի սկզբում ներկայացնում ենք թեմային վերաբերող որևէ բնական երևույթ կամ օբյեկտ, տվյալ դեպքում կարող ենք նշել հարուստ բուսական և կենդանական աշխարհը:

Հիմք ընդունելով մեր նշածը՝ սովորողներից յուրաքանչյուրը կսկսի ինչ-որ բան մտածել դրա մասին. օրինակ՝ թե ինչո՞վ է պայմանավորված այդ հարստությունը:

Այնուհետև զույգ կկազմի որևէ մեկի հետ և այդպես շարունակելով խումբ կդառնան, խմբում էլ կծնվեն բազմաթիվ գաղափարներ ու կարծիքներ թեմայի վերաբերյալ: Շարունակելով աշխատանքը՝ ձևավորված խմբերն իրենց բոլոր մտքերը ներկայացնում են դասարանին, ինչն էլ օգնում է սովորողներին, որպեսզի ընդհանրացված գիտելիքներ ստանան օրվա թեմայից:

Այսպիսով կարող ենք ասել, որ այս մեթոդը նաև որոշակի վստահություն և համարձակություն է տալիս սովորողին նյութը ներկայացնելու ժամանակ, քանի որ նա գիտի, որ ընկերներն իրեն կօգնեն՝ ուղղելով իր սխալները կամ լրացնելով բացթողումները:

Աշխատանքի վերջում կարող են աշակերտները գրատախտակին ներկայացնել պրիզմայատիպ գծագիր:

Այս մեթոդը յուրաքանչյուր սովորողին խմբում և դասին ներգրավելու եղանակներից մեկն է, քանի որ խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը՝ նպաստելով սովորողների համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Միևնույն ժամանակ, եթե հետևենք խմբերի առանձին-առանձին տրված պատասխանների քննարկումներին ու փոխլրացմանը և անհրաժեշտության դեպքում սովորողների ուշադրությունը հրավիրում ենք դրանց վրա, ապա լավագույն արդյունքներ կստանանք, հատկապես մեծ խմբերով աշխատելու դեպքում: Այս մեթոդն առավել արդյունավետ կիրառում կունենա հատկապես 6-րդ դասարանի աշխարհագրության դասընթացում, քանի որ այստեղ առարկան դեռևս նոր է ուսումնասիրվում, կարելի է ասել նոր հիմք է դրվում և աշակերտների համար դժվարություններ ի հայտ կգան, մանավանդ, եթե հաշվի առնենք դասագրքում ընդգրկված թեմաների բարդությունն ու ծավալը, ինչպես նաև առարկային տրամադրվող դասաժամերի քանակը՝ շաբաթական 1 ժամ:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դասավանդման ակտիվ ձևերին է պատկանում նաև աշխարհագրական թելադրությունը: Աշխարհագրության դպրոցական դասընթացում կան թեմաներ, որոնք անցնելիս անհրաժեշտ է լինում կիրառել գվարճալի տարրեր, համեմատաբար բարդ կյուբը պարզեցնել, հուզական ծանրաբեռնվածությունը թեթևացնել, օգնել սովորել նոր տերմիններն ու հասկացությունները:

Այս ժամանակ աշխարհագրական թելադրությունը հնարավոր է անցկացնել հետևյալ ձևով:

Թվանշանային թելադրություն

Ուսումնասիրված թեմայի մասին տրված ունենք մի քանի ճիշտ և ոչ ճիշտ դատողություններ:

Թելադրությունն անցկացվում է բանավոր ձևով, աշակերտներն իրենց պատասխանները ուսուցչին են փոխանցում հատուկ ազդանշանային քարտերի միջոցով. «+» նշանակում են, եթե դատողությունը ճիշտ է, «-»՝ եթե ոչ ճիշտ է: Այս թելադրությունը կարելի է անցկացնել նաև գրավոր: Այս դեպքում աշակերտները տետրերում առանձին սյունակներում գրում են ճիշտ և ոչ ճիշտ դատողությունների համարները, օրինակ Աֆրիկային սահմանակցում է չորս օվկիանոս Բոլոր փոքր մայրցամաքները գտնվում են Հյուսիսային կիսագնդում:

Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը հատում են բոլոր միջօրեականները:

Երկիր մոլորակի ամենախորը լիճը գտնվում է Ասիայում:

Երկիր մոլորակի ամենաերկար գետը Արևելյան կիսագնդում է:

Պատասխանների աղյուսակի նմուշ.

-	+
1,2	3,4,5

Նման տիպի առաջադրանքները հնարավորություն են տալիս կարճ ժամանակում ընդամենը մի քանի բոլորում որոշել այս կամ այն նյութի կամ թեմայի յուրացման հետ կապված խնդիրները:

Ուսուցչի օգնությամբ բավականին արագ է տեղի ունենում սխալների ուղղումը և խնդիրների վերացումը: Թվային թելադրությունը նպաստում է դասդասման, ուշադրության կենտրոնացման կարողության զարգացմանը: Նման տիպի վարժությունը հնարավոր է օգտագործել դասի սկզբին և տնային առաջադրանքը ստուգելու և կշռադատման գործընթացում:

Թվային թելադրություն

Թվային թելադրությունը համակցված առաջադրանքների օրինակ է, որն արտացոլում

է ուսումնասիրվելիք նյութի փաստական տվյալները կամ հայեցակարգային ապարատը: Աշակերտները լսում են ուսուցչի կողմից տրված աշխարհագրական բովանդակության պայմանը, բայց տետրի մեջ գրում են միայն համապատասխան թվաբանական գործողությունը և պատասխանը: Այս միջոցը զարգացնող թելադրության ամենաբարդ ձևն է և պահանջում է ճկուն և հստակ մտածողություն: Նրա կիրառումը ամենաօպտիմալն է սովորած նյութի ընդհանրացման փուլում: Օրինակ՝

Աշխարհի բոլոր օվկիանոսների թվին ավելացրո՛ւ մայրցամաքների թիվը:

Պատասխանը. $5 + 7 = 12$:

Մայրցամաքների թիվը, որոնք հատում է հասարակածը, բաժանի՛ր այն մայրցամաքների թվին, որոնք ամբողջությամբ Հարավային կիսագնդում են գտնվում:

Պատասխանը. $2 : 2 = 1$:

Հյուսիսային կիսագնդում գտնվող սառցի ծածկույթով պատած տարածքն արտահայտող բառի տառերի թվից հանի՛ր օվկիանոսների թիվը, որոնց անվանումը «Ա» տառով չի սկսվում:

Պատասխանը. $7 - 4 = 3$:

Թվային թելադրությունը նպաստում է աշակերտների պատկերավոր մտածողության և հիշողության զարգացմանը:

Թելադրություն «Այո – ոչ»

Թելադրության հետաքրքիր ձև է «Այո-ոչ» խաղը: Ուսուցիչը մտքում կպահի որևէ աշխարհագրական օբյեկտ քարտեզից: Աշակերտները պետք է հարցեր տան, որոնց ուսուցիչը

պատասխանում է միայն «այո» կամ «ոչ»:

Օրինակ.

Այս օբյեկտը օվկիանոսո՞ւմ է գտնվում: ————— Ոչ

Այն մայրցամաք է: ————— Այո

Այս մայրցամաքը Հյուսիսայի՞ն կիսագնդում է: ————— Ոչ

Այս մայրցամաքը հասարակածը հատո՞ւմ է: ————— Ոչ

Այս մայրցամաքը հատո՞ւմ են բոլոր միջօրեականները: ————— Ոչ

Այս օբյեկտը ջրոլորտի՞ մաս է: ————— Այո

Այն կապվո՞ւմ է օվկիանոսի հետ: ————— Այո

Այս մայրցամաքի վրա իր երկարությամբ առանձնանո՞ւմ է: ————— Այո

Այս օբյեկտը Մուրեյ գե՞տն է: ————— Այո

ՔՎԵՍՏ ՄԵԹՈԴ

Աշխարհագրության ժամանակակից դասի անբաժանելի մասն է աշակերտների ինքնուրույն գործնական գործունեությունը՝ ճանաչողական և ստեղծագործական ուսումնասիրություններ խնդիրների ձևակերպման ուսուցում, խնդիրների լուծման ուղիների նախանշում և լուծում, սեփական դիրքորոշումների պաշտպանություն և հիմնավորում: Այս առումով՝ քեյս-մեթոդը, այսպես կոչված case-study-ն, հաջողությամբ է օգտագործվում:

Քեյսն ունի մի քանի սահմանումներ. քեյսը իրական իրավիճակի նկարագրություն է, քեյսը իրականության ակնթարթային պատկերն է, լինելիության, գոյության լուսանկարչություն է, քեյսը ոչ միայն երևույթի իրական նկարագրություն է, այլ նաև միասնական տեղեկատվական հավաքածու է, որը մեզ հնարավորություն է տալիս ծանոթանալ իրավիճակին:

Քեյս-մեթոդը գործիք է, որը մեզ հնարավորություն է տալիս տեսական գիտելիքները կիրառել գործնական առաջադրանքներ կատարելիս: Մեթոդը զարգացնում է աշակերտների ինքնուրույն մտածողությունը, ուրիշների կարծիքը լսելու և այլընտրանքային հայացքներ փոխանակելու, սեփական կարծիքը փաստարկված ներկայացնելու հմտություններ: Այս մեթոդի շնորհիվ աշակերտները հնարավորություն ունեն ցուցադրել և զարգացնել վերլուծական և գնահատման կարողություններ, սովորել խմբով աշխատել, գտնել առաջադրված խնդիրների լուծման ռացիոնալ ճանապարհներ:

Քեյս-մեթոդի հիմնական գործառույթն է աշակերտներին սովորեցնել բարդ, ոչ կառուցվածքային խնդիրներ լուծել, որոնք չեն կարող լուծվել վերլուծական եղանակով: Քեյս- մեթոդն ակտիվացնում է աշակերտներին, զարգացնում տեղեկատվական և հաղորդակցական կարողությունները: Այն հատկապես լավ է կիրառվում հասարակական աշխարհագրության հարցերն ուսումնասիրելիս, քանի որ այս ոլորտում անընդհատ թարմացվում է բովանդակությունը, ինչն աշակերտներին հնարավորություն է տալիս իրավիճակի համեմատական վերլուծություն կատարել:

Քեյսերի վրա աշխատելը ներառում է հետևյալ փուլերը. տեղեկատվության քննադատական ընկալում, խնդրի առաջադրում լուծման համար, խնդիրը հարուցող պատճառներին կողմնորոշված վերլուծություն, խնդրի լուծմանն ուղղված գաղափարների որոնում կամ

գործողությունների պլանի մշակում:

Քեյսերով աշխատանքը դասին ընթանում է 3 փուլով.

1-ին՝ ճանաչողական փուլ՝ անհատական նախապատրաստում: Այս փուլում աշակերտները ծանոթանում են քեյսին և ընդգրկվում են իրական իրավիճակի քննարկմանը: Փորձը ցույց է տալիս, որ այս դասին ամենալավը 1-3 էջանոց տպագիր քեյսի օգտագործումն է, որը հնարավոր է կարդալ 5-10 րոպեում:

2-րդ՝ հիմնական փուլ – աշխատանք փոքր խմբերում: Այս ժամանակ ձևավորվում են խնդրի լուծման տարբեր մոտեցումներ: Խմբի անդամները պետք է մշակեն ընդհանուր կարծիք, որին կարող են կցված լինել սխեմաներ, թեզիսներ: Պետք է նշել, որ ընդհանուր կարծիք մշակելը ուսուցչի համար ինքնանպատակ չէ, պարզապես ցանկալի է: Բայց յուրաքանչյուր աշակերտ կարող է ունենալ իր սեփական, տարբեր կարծիքը և այն արտահայտել քննարկման ընթացքում երրորդ փուլում: case-study մեթոդը տվյալ իրավիճակում հավաքական ուսուցման մեթոդի դերում է, որի կարևոր մասն է հենց խմբերում աշխատելը և տեղեկատվություն փոխանակելը : Խմբային գործունեության մեթոդները քննարկման հարց են: Կարևոր է քեյսի առաջադրանքի խմբային գործունեության մեթոդները քննարկման հարց են: Կարևոր է քեյսի առաջադրանքի վերաբերյալ միասնական կարծիք մշակելը:

3-րդ փուլ՝ խմբի հեղինակային մեթոդի շնորհանդես՝ ուղեկցող քննարկմամբ:

Յուրաքանչյուր խումբ հակիրճ և հստակ ներկայացնում է խնդրի լուծման իր տարբերակը: Խմբային շնորհանդեսին պետք է տրամադրվի 3 րոպե: Այնուհետև սկսվում է քննարկումը խմբերի միջև, որով ավարտվում է կոնկրետ իրավիճակի վրա աշխատանքը, և միևնույն ժամանակ այն ունի մեծ զարգացնող ներուժ:

Քննարկումից հետո ուսուցիչն արտահայտում է իր կարծիքը, սակայն, չի վիճարկում, որ այն միակն է և ճիշտը, դրանով իսկ ընդգծելով այն հանգամանքը, որ ինքը և

աշակերտները գործընկերներ են: Նույն փուլում պետք է գնահատվեն աշակերտների աշխատանքները: Օրինակի համար քննարկենք «Հայաստանի զբոսաշրջական-հանգստյան ռեսուրսները և զբոսաշրջության զարգացումը» թեման: Դասի ժամանակ քեյսերի միջոցով քննարկվում է զբոսաշրջության-հանգստյան ռեսուրսների ներուժը, որոշվում են Հայաստանում զբոսաշրջության զարգացման ինդրի պատճառներն ու լուծման ուղիները: Այս քեյսը գործողության արդյունավետ տարբերակները հասկանալու համար միաժամանակ պետք է կատարի տեխնիկական առաջադրանքի և տեղեկատվության աղբյուրի գործառույթ:

ՈԼՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՏՅՏ-ՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գործնականում համակարգչային են համարվում ուսուցման այն բոլոր տեխնոլոգիաները, որոնց իրացումն ապահովվում է տեխնիկական տեղեկատվական միջոցներով: Այս համատեքստում, երբ համակարգիչները մուտք գործեցին կրթական տարածք, սկիզբ առավ «ուսուցման նորարարական տեղեկատվական տեխնոլոգիա» եզրույթը: Հարկ է նշել, որ տրամաբանորեն յուրաքանչյուր մանկավարժական տեխնոլոգիա կարելի է համարել տեղեկատվական, քանի որ մանկավարժական ժամանակակից գործընթացն անհնար է պատկերացնել առանց տեղեկատվության առատության, իսկ ուսուցման գործընթացի տեխնոլոգիական հիմքն է կազմում տեղեկատվական շարժը կամ նրա ճկուն փոխակերպումը: Ուստի ուսուցման յուրաքանչյուր տեխնոլոգիա, որտեղ ակտիվորեն կիրառվում է համակարգիչն ու այլ թվային տեխնիկա, կարելի է անվանել համակարգչային տեխնոլոգիա:

Ասվածից կարելի եզրակացնել, որ համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ուսուցման գործընթացը ենթադրում է սովորողների և համակարգչային տեխնիկայի միջև սերտ շփում, հարմարվողականության սկզբունքի վրա հիմնված փոխադարձ հարմարում, ինչը պայմանավորվում է սովորողի կողմից համակարգչային տեխնիկայի գործածմամբ առանձնահատկություններում: Ակնհայտ է, որ ուսուցման այս եղանակը կրում է երկխոսական բնույթ այն, չնայած ճկուն և համակարգված բնույթի, ամեն վայրկյան ուսուցչի կողմից ուղղորդման կարիք ունի, հետևաբար կարավառելի է:

Աշխարհագրության դասավանդման արդյունավետության բարձրացման նպատակով է ՏՅՏ-ների օգտագործման բազմաթիվ և անսահմանափակ հնարավորություններ, որոնք մեծապես նպաստում են սովորողների կողմից աշխարհագրական լայնածավալ տեղեկատվության ոլորին յուրացմանը: Ուստի հաշվի առնելով տվյալ առարկայի դիդակտիկական նպատակները ու յուրահատկությունները, առանձնացվում են համակարգչային ծրագրերի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝

- ❖ վարժանքային ծրագրերը
- ❖ ցուցադրական ծրագրերը
- ❖ ուսոցողական ծրագրերը
- ❖ տեղեկատվական ծրագրերը
- ❖ մոդելավորում ծրագրերը
- ❖ մուլտիմեդիա ծրագրերը

Օգտագործելով ցուցադրական ծրագրերի կիրառման հնարավորությունները՝ և՛ ուսուցիչները՝ նոր նյութի մոտեցման անբողջ ընթացքում, և՛ սովորողները՝ ուսուցչի կողմից իրացվող հարցման ժամանակ կարող են իրենց խոսքը ուղեկցել սահիկահանդեսների ցուցադրմամբ, որոնք կազմվում են համակարգչային Power Point ծրագրով: Փորձը ցույց է տվել որ, այս ծրագրերի նպատակային օգտագործումն աշխարհագրության դասագործընթացում թույլ է տալիս նաև զգալիորեն կրճատել անհրաժեշտ տեղեկատվությունը կամ ուսումնական նյութի որոնման ժամանակահատվածը, ինչ արդյունքում արձանագրվում է ուսուցանվող նյութի արագ համալրման ու անձնակենտրոն կրթական գործընթացի կառուցում, որի արդյունքում կարավառվում են սովորողների ընկալման տարաբնույթ իրավիճակներ:

Աշխարհագրության դասընթացը հետաքրքիր դարձնելու համար կարելի է օգտվել էլեկտրոնային կրթական պաշարների շտեմարանից, տրամադրել պատկերներ, լուսանկարներ, ռելիեֆի եռաչափ մոդելներ և այլն, համակարգչային ծրագրային այլ փաթեթներում ձևափոխելու և օգտագործելու համար, որոնց օգնությամբ սովորողները կարող են մոդելավորել երևույթները, կազմել քարտեզ-գծապատկերներ, կառուցել պրոֆիլներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ հնարները կիրառումը շատ կարևոր է աշխարհագրության դասերը առավել արդյունավետ դարձնելու համար:

Արդյունավետ հնարների կիրառումը աշխարհագրության դասաժամերին ունի մի շարք առանձնահատկություններ.

- ❖ հնարավորություն է տալիս ուշադրության կետրոնում պահելու, թե ինչ չափով են աշակերտները կարողանում կապակցել գիտելիքը և դրա հիման վրա ստեղծել նոր գիտելիք
- ❖ աշխատում է ամբողջ դասարանը,
- ❖ աշակերտները հնարավորություն ունեն միմյանց լսելու, կարծիքներ փոխանակելու, միմյանցից սովորելու,
- ❖ նպաստում է ուսուցման փուլային պլանավորմանը,

1. Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ ընթացքում:

2. Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու աշակերտները միասին:

3. Ի՞նչ պետք է անեն աշակերտներն իրար հետ՝ առանց ուսուցչի միջնորդության:

4. Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն

Արդյունավետ հնարների կիրառման ժամանակ սովորողը ուսուցանող համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող սուբյեկտիվ-օբյեկտիվ հարաբերություններում, պարբերաբար դառնալով նրա ինքնավար ակտիվ տարրը:

Աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով ՏՀՏ-ների կիրառմամբ տեսական և մեթոթաբանական հիմքերը հստակեցվել են: Բացահայտվել է, որ աշխարհագրության դասագծընթացում ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումը հնարավորություն է ընձեռում լուծելու մանկավարժական այնպիսի խնդիրներ, որոնք ուղղված են ոչ միայն դեռահասների առարկայական գիտելիքների արդյունավետ յուրացմանը, այլ նաև նրաց տեղեկատվական և հաղորդակցական մշակույթի ձևավորմանն ու գիտական հասկացությունների միջև տրամաբանական կապերի վերհանման կարողությունների զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան, 2014:
2. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
3. Ա. Հովսեփյան, Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան, Աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ, Երևան, Աստղիկ գրատուն, 2013
4. Ջեյմս Ֆ. Սիլվեր, Աշխարհագրություն, Մեթոդական նյութեր ուսուցիչների համար: Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն:
5. Աստվածատրյան Մ.Գ. և ուրիշներ, Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան, «Աստղիկ» հրատ., 2004-232 էջ: